

ՄԵԼԻՔ-ԵԳԱՆԻ ՆՈՐԱՀԱՅՏ ԹՐԵՐԻ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԱՐՏԱԿ ՄԱՂԱԼՅԱՆ

Դիզակ (Տիզակ, Դուզախ) գավառի մելիքության տարածքը սկսվում էր Դիզախայտի լեռնային գոտուց և Բշխանագետից ու տարածվում մինչև Արաքս գետը՝ Խուդափերինի կամրջի մոտ: XVIII դարասկզբից Դիզակ գավառի իշխողներն էին Մելիք-Եզանյանները (Մելիք-Ավանյաններ), որոնց ամրոցը գտնվում էր Տոդ ավանում, Գտիչ վանքի դիմաց:

Դիզակի Մելիք-Եզանյանների ծագման մասին եղած տեղեկությունները խիստ իրարամերժ են: Այսպես, XIX դ. պատմագիր Միրզա Յուսուֆ Ներսեսունյը գտնում է, որ «այնտեղի մելիքները հնում Թուրքիայից (Ռում) են եկել»¹: Իսկ ըստ Գուշափանքի վանահայր Ա. Կոստանյանցի², Միրզա Ադիգ-յոզալ-բեկի³, Ս. Ջալալյանցի և Բաֆֆու՝ Մելիք-Եզանյանները Ղարաբաղ են եկել Լոռուց: Ս. Ջալալյանցը և Բաֆֆին վերջիններիս սերված են համարում Լոռի-Մելիքյաններից, իսկ որպես նրանց նախնական բնակավայր մատնանշում են Լոռի գավառի Արդու գյուղը⁴:

Ըստ ավանդությունների՝ XVIII դարասկզբին Մելիք-Եզան, որդի Ղուկաս վարդապետի, ի նահանգէն Լոռույ ի գեղջէն Արդուոյ, յազգէ Լօրիս Մելիքեանց, մարտ եղեալ ընդ իւրում ազգականի Էլիզբարայ, որ ի նմին ժամանակի տիրէր երկուց նահանգաց՝ Լոռուայ և Տաշիրայ, ի բաց առեալ զՄժաւէթն և զԲարաժանաձորն, իսկ յո՛չ ստանալն նմա վերաբնակի ընդ հօր իւրում աղիսին հանդերձ աշխարհն Արցախու ի նահանգն Տիզակայ և ի գիւղ Տոդ⁵: Սակայն առայժմ բացակայում են Մելիք-Եզանյանների տեղափոխման մասին վկայող ստույգ փաստեր, և վերջին խոսքը կրկին պատկանում է ավանդություններին:

Թուրք-պարսկական պատերազմում Ղուկաս վարդապետի որդի Մելիք-Եզանը օսմանյան թուրքերի դեմ պայքարում ցուցաբերած եռանդի համար Նադիր շահից ստացել է Խամսայի մելիքությունների գերագահությունը: Նրա անունով տոհմի անդամները սկսել են կոչվել Մելիք-Եզանյաններ (Մելիք-Ավանյաններ): Մելիք-Եզանը 1736 թ. փետրվարին Մուղանի դաշ-

¹ Միրզա Յուսուֆ Ներսեսունյ. Ճշմարտացի պատմություն, Երևան, 2000, էջ 40:

² Ա. Կոստանյանց. Դիզակի մելիքությունը. – «Նյութեր հայ մելիքության մասին», պր. Ա, Վաղարշապատ, 1913, էջ 12–13:

³ Мирза Адигезаль-бек. Карабаг-наме. Баку, 1950, с. 57.

⁴ Ս. Ջալալյանց. Ճանապարհորդություն ի Մեծն Հայաստան, հ. Բ, Տփլիս, 1858, էջ 259, Բաֆֆի. Երկերի ժողովածու, հ. 9, Երևան, 1987, էջ 428:

⁵ Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան (այսուհետև՝ ՄՄ), մանրածապավեն - 367, էջ 4:

տավայրում մասնակցել է Նադիր շահի թագադրությանը⁶, այնուհետև վերջինիս կողմից նշանակվել Խամսայի մելիքությունների խան և բեկլարբեկ (իշխանաց իշխան): Թեև չի պահպանվել Մելիք-Եզանի այս իրավունքը հաստատող շահական հրովարտակը, սակայն այդ ժամանակաշրջանի Արցախին վերաբերող պատմական գրեթե բոլոր սկզբնաղբյուրները և վավերագրերը փաստում են նրա ունեցած լայն լիազորությունների ու անվիճելի հեղինակության մասին⁷: Մելիք-Եզանի ընդունարանի մուտքի վիմագիր արձանագրության մեջ ժամանակագրական կարգով հակիրճ նկարագրված են նրա իշխանության օրոք տեղի ունեցած հիշարժան որոշ իրադարձություններ: Ահավասիկ այդ արձանագրությունը՝ պատմաբան Հ. Փափագյանի վերծանության թարգմանությամբ. «ՌՃՁԶ (1737) թ.: Այս ընդունարանը հիշատակ է: Այսպես է, որ ես Ղուկաս վարդապետի որդիս, որ իմ անունն է Մելիք-Եզան, նախապես ժողովուրդը հավաքվեց և ինձ քյոխվա [տանուտեր] կարգեց: Դրանից հետո, երբ երկիրը խառնակության մատնվեց, շահ Սուլթան-Հուսեյնի որդի շահ Թահմասսա թագավորին որոշ ծառայություն մատուցեցի, և նա բերեց սրանց [վրա] ինձ մելիքություն տվեց: Այնուհետև օսմանցին եկավ և [երկիրը] նրա ձեռքից վերցրեց: Սրան էլ այս չափ ծառայություն ցույց տվի, որ երբ բերին Դիզակ, ես չթողեցի, որ Հայաստանից գերի գնան: Արադից [Կենտրոնական Իրան] շահ Նադիր գործեղ թագավորը իր գործով եկավ, երկիրը օսմանլուի ձեռքից առավ: Նրան էլ այնքան ծառայություն մատուցեցի, որ նա քրիստոնյա ազգի 6 մահալներին՝ Թալիշի, Չարաբերդի, Խաչենի, Վարանդայի, Քոչիզի և Դիզակի վրա, ինձ որպես խան և բեկլարբեկի կարգեց. շնորհ արեց: Ով հետո կարդա, այս գրությունից կիմանա, որ մեր որպիսությունը այսպես է եղել և թող մի ողորմի ասի: Եղավ: Ամեն»⁸:

Մեր տրամադրության տակ կան մի քանի նորահայտ վավերագրեր, որոնց օգնությամբ կարող ենք հետադարձ հայացք նետել վիմագրում արձանագրված առանձին իրադարձությունների վրա: Այսպես, Հայաստանի ազգային արխիվում պահվում է ՌՃԿԶ (1717) թվականը կրող մի առուծախի պայմանագիր, ըստ որի Ջիլվանց Տիհու տղա Չալին իր ջրաղացը վաճառում է իր հորեղբայր «Մարքիսայ տղա Բսուն»⁹: Փաստաթուղթը կարևոր է ոչ այնքան իր բովանդակությամբ, որքան այն հանգամանքով, որ այդ պայմանագրի վրա դրված է Եզանի կնիքը՝ «Եկան քօխան վկ.» մակագրությամբ: Այսպիսով, այս փաստաթղթի շնորհիվ պարզ է դառնում, որ 1717 թ. Եզանը տակավին Տոդ գյուղի տանուտերն էր:

Անցնելով առաջ, նշենք, որ նույն թղթապանակում պահվում են 1727–1728 թթ. երկու այլ վավերագրեր, որոնցում Եզանն արդեն հիշատակվում է մելիքի տիտղոսով: Այդ փաստաթղթերից առաջինում Եզանը հանդես է գալիս որպես առուծախի մի գործարքի վկա՝ «մելիք Եկանանըն վկա» մա-

⁶ Ա. Բ. ր ա հ ա մ Կ ր ե տ ա ց ի. Պատմություն, Երևան, 1973, էջ 80:

⁷ Մատենադարանի պարսկերեն վավերագրերը. հրովարտակներ, պր. IV, կազմեց Ք. Կոստիկյանը, Երևան, 2008, էջ 8:

⁸ Հ. Փ ա փ ա գ յ ա ն. Մելիք-Եզանի ընդունարանի մուտքի վիմագիր արձանագրությունը. – ՀԽՍՀ ԳԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», 1985, -5, էջ 77:

⁹ Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), ֆ. 57, ց. 1, գ. 3, թ. 4:

կազրույթամբ¹⁰, իսկ երկրորդ վավերագիրն արդեն տրված է նրա կողմից: Նկատի ունենալով վերջին փաստաթղթի կարևորությունը՝ այն բերում ենք ամբողջությամբ. «Ես մելմելիք Եզանըս իմ Արչայձոր վերգալի դվէ խձեցի խօջայ Ղասումին գամ տէր Սօսէսին, ապլուն իմ կամօվրս դվի Լ (30) թմանու էս մին թարափ քարէ կապրն, մին թարափ խաչրն, մին թարափրն ախպուրրն, մին թարափ Հկագվայ կեղրն, օրիշ մարթու պան չլնի, թվն. ՌՃՀԷն (1728) յունվրի ամէս էր»¹¹: Սույն փաստաթղթերը խոսում են Հ. Փափագյանի այն տեսակետի իրավացիության օգտին, ըստ որի Եզանի մելիքական իրավունքները շահ Թահմասայ II (1722–1732) կողմից հաստատվել են 1724–1725 թթ., երբ վերջինս աֆղաններից հալածված անցել էր Ատրպատական¹²: Բսկ ինչպես տեղեկանում ենք Մատենադարանի թիվ 1915 ձեռագրի վերջում Մեսրոպ վարդապետի թողած հիշատակարանից, նաև նախքան այդ «ՌՃՀԷ (1723) թուին հոկտե[մ]բերի Ի և Թ (29)–ին թագաւորն Շահ Թահմագ եմուտ ի քաղաքն Նախչաւան»¹³: Մեֆյան շահը փորձում էր միավորել ուժերը՝ դիմագրավելու օսմանյան բանակի ներխուժմանը Անդրկովկաս և Ատրպատական: Ակներևաբար, այդ ժամանակ էլ հաստատվել են Եզանի մելիքական իրավունքները:

Հայ-ռուսական հարաբերություններն արտացոլող փաստաթղթերը հնարավորություն են ընձեռում առավել կոնկրետացնել Եզանի՝ մելիք նշանակվելու տարեթիվը: Այդ վավերագրերում Եզանն առաջին անգամ մելիքի տիտղոսով հիշատակվում է 1724 թ. մարտի 20-ով թվագրված մի փաստաթղթում¹⁴, ուստի, ամենայն հավանականությամբ, նրա մելիքական իրավունքները շահ Թահմասայ II-ի կողմից հաստատվել են 1723-ին կամ 1724 թ. սկզբին¹⁵:

Հետագայում արդեն, ինչպես հաղորդում է վիմագիրը, Մելիք-Եզանը Նադիր շահի կողմից նշանակվել է Արցախի հայկական մելիքությունների ընդհանուր կառավարիչ: Նա Արցախի մելիքությունների երկդարյա պատմաշրջանի ամենահզոր տիրակալն էր:

Այժմ մեր տրամադրության տակ կան նորահայտ երեք թրեր և մեկ գավազան, որոնք ըստ մեր նախնական դիտարկումների պատկանել են Դիզակի Մելիք-Եզանին:

Առհասարակ, չափազանց քիչ են հայ իշխանների և մելիքների կողմից գործածված այն զենքերն ու զինատեսակները, որոնք պահպանվել և հա-

¹⁰ Նույն տեղում, թ. 3:

¹¹ Նույն տեղում, թ. 2: Ի դեպ, այս փաստաթուղթը հրապարակել է Ա. Հակոբյանը, սակայն նա վավերագիրը թվագրել է ՌՃԼԷ (1688) թվականով (Լ-Հ գրչական սխալի հետևանքով առաջ եկած շփոթի), դրանով Մելիք-Եզանին մոտ կես դարով կտրելով իր ժամանակաշրջանից (տե՛ս Ա. Հա կ ո բ յ ա ն. Գտչավանքի շինարարական արձանագրությունը և հարավային Արցախի եպիսկոպոսության սահմանները. – «Հանդես ամսօրյա», 1999, թիվ 1–12, էջ 283, ծան. 66): Ակնհայտ է, որ Եզանը մելիքի տիտղոսով չէր կարող հանդես գալ գոնե մինչև 1717 թ., երբ ինքն իրեն հիշատակում է որպես տանուտեր: Պատահական չէ, որ սույն փաստաթղթում հիշատակված Ղասումի անունը հանդիպում է նաև նույն գործում ընդամենը մեկ թերթ այն կողմ կարված ՌՃՀԸ (1729) թ. մեկ այլ վավերագրում:

¹² Հ. Փ ա փ ա գ յ ա ն. նշվ. աշխ., էջ 77:

¹³ ՄՄ, ձեռ. -1915, էջ 280բ:

¹⁴ Армяно-русские отношения в первой трети XVIII века. Сборник документов, т. II, ч. II. Ереван, 1967, с. 92.

¹⁵ Ա. Մ ա դ ա լ յ ա ն. Արցախի մելիքությունները և մելիքական տները XVII–XIX դդ., Երևան, 2007, էջ 204:

սել են մեր օրերը: Այդ իսկ պատճառով նրանցից մեզ հասած յուրաքանչ-յուր զինատեսակ բացառիկ արժեք է ներկայացնում: Դրանցից է, օրինակ, Խաչենի իշխան Հասան-Ջալալ Դոլայի դաշույնի նեֆրիտե երախակալը, որի վրայի փակագիր արձանագրությունը՝ «Հասան Ջալալ իշխան Խաչենոյ», ժամանակին վերծանել և հրատարակել է Հովսեփ Օրբելին¹⁶: Մեկ այլ ուշագրավ օրինակ կապված է 1910 թ. դեկտեմբերին Փարիզի աճուրդային գործակալություններից մեկում վաճառքի հանված մի սրի հետ, որն իր շեղբի վրա ուներ հայերեն գրություն, իսկ ավելի ստույգ՝ Նոր կտակարանի Հայտնության գրքից չորս ընդարձակ տողեր: Թե ում է պատկանել սուրը և ի՞նչ ժամանակաշրջանի է՝ անհայտ է: Ֆրանսիացի հայագետ Ֆրեդերիկ Մակլերն այս սրի մասին հաղորդմամբ և հայերեն գրության վերծանությամբ մի հոդված է տպագրել «Nouvelle mosaïque orientale» հանդեսի էջերում¹⁷:

Մելիք-Եզանի նորահայտ թրերը՝ պապից թոռ փոխանցվելով, երկար ժամանակ պահպանվել են պատմական Ուտիք նահանգի Գարդման գավառի Բանանց գյուղում, Բնիչանց (Բանույան) տոհմի շառավիղների մոտ¹⁸: Երեք թրերն էլ հայկական շամշիր են: Չափերը՝ մեծ, միջին և կարճ: Դատելով թրերի վրա կատարված մակագրությունների հայերեն լինելու հանգամանքից՝ կարծում ենք, որ զինագործ վարպետը հայ է եղել:

1. ՄԵԾ ԹՈՒՐԸ




Մեծ թրի նկարագրությունը – ամբողջ երկարությունը՝ 97 սմ: Առանց կոթի՝ 85 սմ: Բռնակը՝ 12 սմ, փայտյա, արծաթե թիթեղներով և ծաղկանշանով զարդարված: Գլուխը՝ փայտ կետտաշ: Բռնակի խաչ պահունակը՝ երկաթ, 12 սմ: Շեղբի լայնությունը՝ 3,5 սմ: Հաստությունը՝ 6 մմ: Մայրը

¹⁶ И. Орбели. Нефритовая кинжальная рукоятка с армянской надписью.— В кн.: И. Орбели. Избранные труды. Ереван, 1963, с. 135–145.

¹⁷ Frédéric Macler. Notice d'une épée à inscription arménienne. — “Nouvelle mosaïque orientale”, Paris, 1923, p. 150–154.

¹⁸ Մեր խորին երախտագիտությունն ենք հայտնում Բանույան ընտանիքին՝ սույն նյութերը հետազոտման և հրատարակման նպատակով մեզ տրամադրելու համար:


մեկ կողմից: Ակոսներ՝ երկու, բութ եզրից, մեկը նեղ, մյուսը լայն, երկու երեսում էլ կան: Դրոշմը՝ լայն ակոսի 14 սմ-ի վրա հատող, 5 սմ երկարությամբ, ոսկեջրած զարդանախշով, մեջտեղում ութաթև աստղի մեջ առյուծ՝ ձախից աջ կիսապատկերով, պոչը վեր հանած և թաթի մեջ սուր: Առյուծի տակ, օվալի մեջ, կցագիր մակագրություն՝ ^{ԱԲ} («ԱԲ» – «ԵԳ»), ամբողջովին ոսկեջրած է եղել (աստղի մեջ մնացել են ոսկեջրի հետքերը): Պատյանը՝ կաշեպատ փայտ, փականը՝ արծաթյա: Պատյանի վրա երկու երկաթյա ագույցներ՝ գոտու փոկերը կապող: Գոտին և գոտու փոկերը կաշվից՝ երկաթե կեռիկներով:



Մեծ թրի դրոշմակնիքը

Համակարգիչով դրոշմակնիքը խոշորացնելուց և աստիճանաբար մզացնելուց հետո, սուրը թաթի մեջ վեր պահած առյուծից ներքև օվալի (շրջանի) մեջ երևում են ոսկեջրված կցագիր ^Ա («ԱԲ») և ^Բ («ԵԳ») գրերը: Նույն գրերն են հայտնաբերվում նաև խմորով կնիքը վերարտադրելուց: Դրոշմակնիքը ոսկեջրված է: Դրոշմակնիքը Նադիր շահի զինանշանն է:

Ա («ԱԻ») և Ն («ԵԳ») կցագիր հապավումները թրի տիրոջ անվան սկզբնատառերը կամ հապավումն են, ինչն այս դեպքում կարող է նշանակել «Աւան Եզան»:




Թուրք կարող էր պատկանել միայն բարձրաստիճան հայի, որպիսին եղել է Մելիք-Եզանը (Ավան), ով Նադիր շահից 1736 թ. ստացել է Խամսայի մելիքությունների գերագահությունը, և, ըստ երևույթին, նույն թվականին էլ ստացել է սույն շահական ոսկեջրված դրոշմակնիքով շքերթային թուրք և ներքոհիշյալ գավազան-սուները:

2. ՄԻՋԻՆ ԹՈՒՐԸ



Միջին թրի նկարագրությունը – *ամբողջ երկարությունը՝ 91 սմ: Առանց կոթի՝ 79 սմ: Բռնակը՝ 13 սմ, կաշեպատ փայտ, երկու կողմից երկուական գամերով, արծաթե ծաղկանշանով զարդարված: Գլուխը՝ փայտ կետուաշ, երկաթե գլխիկով: Բռնակի խաչ պահունակը՝ երկաթ, 13 սմ: Շեղքի լայնությունը՝ 3,5 սմ: Հաստությունը՝ 6 մմ: Մայրը՝ մեկ կողմից: Ակոսներ՝ մինչև 13 սմ երկու, մակագրության համար տեղ թողնված: Այնուհետև երեք, բութ եզրից, հավասարաչափ լայնքով, երկու երեսում էլ կան: Դրոշմը՝ ութաթև ծաղիկ, մեջտեղում անիվ՝ չարխ: Մակագրությունը՝ բռնակից մինչև ակոսների սկզբնամասը: Պատյանը՝ կաշեպատ փայտ, փականը արծաթյա: Պատյանի վրա երկու երկաթյա ագույցներ՝ գոտու փոկերը կապող: Գոտին և գոտու փոկերը կաշվից՝ երկաթե կեռիկներով:*



Միջին թրի մակագրությունը

Թրի վրա մինչև վարպետի ծաղկանշանն ու հետո փորագրված կետագծային նշանները նման են միջնադարյան ձեռագրերում հանդիպող կետագծային ծածկագրությանը¹⁹:

Թրի բռնակից մինչև ծաղկանշան ալիքավոր գծի վերևում կա 19 կետ, իսկ ներքևում՝ 18: Ալիքների վերամբարձ հատվածները 7-ն են: Ալիքների աջ կողմում՝ ծածկագրի սկզբում, ուղղահայաց 4 կետ կա:

Ծաղկանշանի ներքևում կա մեկ գծի վրա գրեթե հավասար հեռավորության վրա 7 կետ: Աջ կողմում անկյունավոր խաչի և ծաղկանշանի միջև, ոչ հավասարաչափ ուղղահայաց 4 կետ կա: Անկյունավոր խաչի կենտրոնով և աջ կողմում վերից վար ուղղահայաց չորսական կետեր կան: Անկյունավոր խաչն անցնում է մեջտեղի ուղղահայաց չորս կետերից վերևից երկրորդի վրայով: Աջ կողմի ուղղահայաց չորս կետերից վերևից երկրորդի կողքին կա ևս մեկ կետ:

Խաչանշանից աջ, սրի երկու ակոսների վրայով կա ուղղահայաց 4 կետ, ներքևից առաջին կետից աջ ու ձախ հավասարաչափ հեռավորության վրա մեկական կետեր, իսկ վերևից երկրորդ կետի կողքին ևս մեկ կետ, որոնք ամբողջության մեջ հիշեցնում են հայերեն «Է» տառը: Ինչպես նկատելի է կետերի քանակից ու նրանց դասավորությունից ակնհայտ թվային համաչափություն է 4-ը: Այս թվային համաչափությունը ծածկագրի առաջին բանալին է:

4 թիվը – նախ, ծածկագիրը սկսվում է ուղղահայաց չորս կետերով, հորիզոնական նույն ուղղությամբ չորս կետեր կան անկյունավոր խաչի մեջ՝ երեք ուղղահայաց չորսական կետեր: Անկյունավոր խաչի մեջտեղի ուղղահայաց չորս կետերից մեկը վար է ընկած: Ուղղահայաց դասավորությամբ և մյուս ուղղահայաց չորս կետերի հետ հորիզոնական համաչափությամբ չորս կետեր կան նաև անկյունավոր խաչից աջ:

Ուղղահայաց չորս կետերը նշանակում են չորս տողեր, ինչպես ընդունված է հայկական ծածկագրության մեջ, ձախից աջ հորիզոնական-քառա-շարք դասավորությամբ մաշտոցյան այբուբենում:

Ա	Բ	Գ	Դ	Ե	Զ	Է	Ը	Թ
Ճ	Ի	Լ	Խ	Ծ	Կ	Ն	Չ	Ղ
Ճ	Մ	Յ	Ն	Շ	Ո	Չ	Պ	Ջ
Ռ	Ս	Վ	Տ	Ր	Ց	Ի	Փ	Ք

Ալիքաձև գիծը – ծածկագրի ամբողջ երկարությամբ ձգվող ալիքաձև գիծը կետախմբերը բաժանում է երկու մասի, որոնցից վերևինը ցույց է տալիս գրի դիրքն այբուբենում ձախից աջ հերթականությամբ, իսկ ներքևինը այբուբենում նրա զբաղեցրած տողը վերից վար հերթականությամբ: Գիծը սկսվում է ձախ կողմում ուղղահայաց չորս կետերի վերևից երկրորդ կետից: Ուշագրավ է, որ գծից ներքև կետախմբերի քանակը 1–4

¹⁹ Ծածկագրության այս տեսակի մասին տե՛ս Ա. Աբրահամյան. Հայոց գիր և գրչություն, Երևան, 1973, էջ 245–249:

է, այսինքն՝ չորսից չի անցնում և չորս տողերի քանակով է: Ալիքների վերամբարձ հաստվածները որոշ իմաստով տառանջատման ակոսներ են հիշեցնում:

Կետագծային ծածկագրության բազմաթիվ տարբերակներից միայն մեկն է արդյունք տալիս: Այն է. «Ա» գիրը նշվում է մեկ կետով՝ գծի վերևում կամ ներքևում, և կամ մեկ կետ գծից ներքև, մյուսը վերև: Կետերի խմբերը ներքևում չեն կարող անցնել չորսը, քանի որ այբուբենի տողերի քանակը չորս է: Իսկ վերևում 9-ը՝ քանի որ այբուբենի մեկ տողում ինը գիր կա: Այսպիսով վերը նշված պատկերում տառանջատելով գծից ներքև ընկած կետերը և պարզելով գրի զբաղեցրած տողը, իսկ վերևում եղած կետերով գտնելով գրի դիրքը այբուբենի տողի վրա ծածկագիրը վերծանվում է հետևյալ կերպ՝ «ԱՎԱՆ ԽԱՆԻ»:

Աջ կողմում գիծը վար իջնելով՝ հաստվում է ծաղկանշանի տակ եղած կետերից առաջինին, իսկ սրի վրա եղած ակոսի վերջում՝ ճիշտ գծի վերջավորության վերևում ևս մեկ կետ կա, ինչը նշանակում է, որ վերջին գիրը այբուբենի առաջին տողի յոթերորդ գիրն է, այսինքն՝ «Է»: Ծածկագրի ամբողջ վերծանությունն ընթերցվում է հետևյալ կերպ. «ԱՎԱՆ ԽԱՆԻ Է», այսինքն՝ «Ավան խանին է պատկանում»: Այստեղ տեղին է հիշել, որ Մելիք-Եզանը իրեն «խան» էր անվանում նաև իր ընդունարանի մուտքի 1737 թ. վերորբերյալ վիմագիր արձանագրության մեջ, իսկ դրանից մեկ տարի առաջ՝ 1736 թ., ինչպես նշել էինք, Նադիր շահից ստացել էր Խամսայի մելիքությունների գերագահությունը, և հավանաբար՝ հենց այդ ժամանակ էլ իր մարտական թրի վրա ավելացրել է սույն ծածկագիր մակագրությունը:

Ծածկագրի ուղղագրությունը, անշուշտ, տարբեր է մեր իմացած գրաբարի ուղղագրությունից, բայց պետք չէ մոռանալ, որ գործ ունենք միջին հայերենի շրջանի հետ, երբ ուղղագրական նման շեղումներն առատ են:

3. ԿԱՐՃ ԹՈՒՐԸ



Կարճ թրի նկարագրությունը – ամբողջ երկարությունը՝ 84 սմ: Առանց կոթի՝ 73 սմ: Բռնակը՝ 11 սմ, փայտ, երկու կողմից գամերով, արծաթե թիթեղով զուտնոր զարդարված: Գլուխը՝ փայտ կետտաշ, արծաթե գլխիկով: Բռնակի խաչ պահունակը՝ երկաթ, 10 սմ, ոսկով դրվագազարդված, ծաղ-

կանչան և երկրաչափական այլ պատկերներ: Շեղրի լայնությունը՝ 3 սմ: Հաստությունը՝ 5 մմ: Մայրը՝ մեկ կողմից: Ակոս՝ մեկ, լայն: Դրոշմը՝ խաչ պահունակի վրա ոսկով դրվագված ութաթև ծաղկանշան: Պատյանը՝ կաշեպատ փայտ, փականը՝ արծաթյա: Պատյանի վրա երկու երկաթյա ազույցներ՝ գոտու փոկերը կապող: Գոտին և գոտու փոկերը կաշվից՝ երկաթե կեռիկներով:



Բռնակի խաչ պահունակի ութաթև ծաղկանշանը

4. ԳԱՎԱԶԱՆ-ՍՈՒՍԵՐԸ




Գավազան-սուսերը – երկարությունը մոտ 70 սմ: Կոթը՝ 12 սմ: Գլխիկը՝ փայտյա: Բռնակը՝ փայտով ու ոսկրով զարդարված: Սուսերը՝ քառակող, ակոսներով, աստիճանաբար սրացող, բնում լայնությունը 6 մմ: Պատյանը՝ կլոր կաշեպատ փայտ: Դրոշմ՝ բռնակին մոտ, պարսկերեն զարդագիր՝ գրված է «կուրբան»: Նման մակագրությամբ գավազանը կարող էր խորհրդանշել Մելիք-Եզանի անսահման նվիրվածությունը Նադիր շահին:

Այստեղ հարկ է նշել, որ պարսիկ պատմագիր Մուհամմադ-Քյազիմը Մելիք-Եզանին հիշատակում է որպես նուրբ քաղաքագետին հատուկ արտակարգ ընդունակություններով օժտված իմաստուն մի գործչի, որը Նադիրի կողմից մեծ սիրո և վստահության էր արժանացել²⁰: Պատահական չէ, որ Նադիր շահը հայ մելիքին «բարալրդ» (թուրք. «հայրացու») էր անվանում: Մուղանի դաշտավայրում գտնվելու ժամանակ «Նադիր շահը սովորություն ուներ շուտ-շուտ ճաշել Մելիք-Ավան-խանի (Եզանի – Ա. Մ.)

²⁰ Հայ ժողովրդի պատմություն, հ. IV, Երևան, 1972, էջ 181:

տանը, – գրում է Բաֆֆին, – որի ճոխ սեղանը հոշակված էր, թե այնտեղ ամեն բարիք կարելի է գտնել»²¹: Մեզ է հասել մի ուշագրավ ավանդություն Իրանի ամենագոր շահի և Դիզակի իմաստուն մելիքի հարաբերությունների վերաբերյալ: Պատմում են, որ «ի ժամանակի ձմերելոյ Նատիր շահի ի դաշտին Մուղանու բոլոր զօրաց նորա տալով զկերակուր [Մելիք-Եզանը]՝ պատուեալ է գնտա: Ի սմին միջոցի հրամայեաց շահն Մելիք-Եկանայ բերել ինքեան զսունկ տասն լիտր, և նա յանձնառու եղև, զի պատրաստեցէ: Բայց հպատակք մելիքի մեծամեծ անձինք ասացին, թէ.



«Վասն է՞ր զայս անհնարին հրաման ի յանձն առէր, ուստի՞ ունիս գտանել զսունկ յայսմ ձմերան ժամանակի»:

Որոց պատասխանի արար, թէ.

«Ես ինքն, ի վերջոյ, տաց շահին զպատասխան»:

Յետոյ զնացեալ առ Նատիր՝ յայտնեաց նմին, թէ.

«Ըստ հրամանի ձերում առաքեցի զարս յայն տեղիս, որ բուսուցանէ զսունկ, այլ գտին զվայրսն ծածկեալ ձեամբ»:

Շահն խնդացեալ ընդ այս կարի յոյժ՝ ասաց.

«Ես ևս գիտեմ, զի ի ձմերան ժամանակի ո՛չ լինի սունկ, այլ զքեզ փորձէի միայն: Եւ որովհետև ի միջի բազմութեան ի հրամանէ իմմէ ո՛չ կացիր ի բաց և ընկալար զայն որպէս կատարելի, վասն որոյ Բաբալ[ը]դ իմ ես արդա՛րն»²²:

Այստեղից կարելի է ենթադրել, որ այս գավազանը ևս պատկանել է Մելիք-Եզանին և կարող էր խորհրդանշել նրա իշխանությունը:

Դիզակի մելիքության մեծանուն տիրակալ Մելիք-Եզանը վախճանվել է 1744 թ. և թաղվել Տող գյուղի եկեղեցու գավթում, ուր գտնվում էր Մելիք-Եզանյանների տոհմական գերեզմանատունը: Նրա շիրմաքարը կրել է հետևյալ չափածո տապանագիրը.

«Այս է տապան քաջ իշխանին
Եկան անուն մեծ Մելիքին,
Որ է որդի բարեպաշտին
Ղուկաս անուն վարդապետին.
Եղև սիրեցեալ ամենայնին
Նատիր անուն թագաւորին:
Տիրապետեաց սայ ի երկրին

²¹ Բաֆֆի. նշվ. աշխ., էջ 444:

²² Միրզա Ադիգեզալ-բեկ. Ղարաբաղ-նամե.– ՄՄ, ձեռ. -4463, էջ 6բ, Ա. Մաղալյան. Միրզա Ադիգեզալ-բեկի «Ղարաբաղ-նամե» աշխատության տեղեկություններն Արցախի մելիքությունների մասին.– «Հանդես ամսօրյա», 2011, թիվ 1–12, էջ 402: Ի դեպ, Միրզա Ադիգեզալ-բեկի աշխատության Բաբալի 1950 թ. հրատարակության մեջ այս ուշագրավ ավանդությունը ներառված չէ (հմմտ. Мирза Адигезаль-бек. նշվ. աշխ., էջ 57):

*Ի Աղուանից ի նահանգին
Յոյժ պատուեցաւ պարսից ազգէն,
Քան զիշխանս Հայոց երկրին: ՌՃՂԳ (1744)»²³:*

Ամփոփելով՝ նշենք, որ Մելիք-Եգանին վերաբերող դիվանական վավերագրերին, ձեռագրական և վիմագիր աղբյուրներին գալիս են ավելանալու նրա երեք թրերի վրա արված արձանագրություններն ու գավազան-սուսերի դրոշմը, որոնք բոլորն էլ, ամենայն հավանականությամբ, թվագրվում են 1736 թվականով: Բացառությամբ շինարարական արձանագրությունների և ձեռագիր մատյաններում սփռված վկայությունների, շատ չեն պահպանվել տարբեր շրջանների հայոց պետականության աշխարհիկ իշխանությունը խորհրդանշող առարկաներ կամ հայտնի պետական և ռազմական գործիչների զենք ու զրահներ: Մելիք-Եգանի նորահայտ թրերը մեզ հասած այն եզակի զենքերից են, որոնք աշխարհիկ իշխանությունը բնորոշող խորհուրդ ու արժեք են ներկայացնում՝ իրենց վրա ունենալով կրողի իշխանությունը հավաստող դրոշմակնիքներ և մակագրություններ:

НАДПИСИ НА НОВОНАЙДЕННЫХ САБЛЯХ
МЕЛИКА ЕГАНА

АРТАК МАГАЛЯН

Резюме

За исключением строительных надписей и разрозненных свидетельств в манускриптах сохранилось лишь небольшое число предметов, символизирующих светскую власть армянской государственности разных эпох, и ограниченное количество оружия и доспехов, принадлежавших известным государственным и военным деятелям. Надписи на новонайденных саблях и клеймо на трости с вкладной шпагой мелика Егана, по всей вероятности, датируются 1736 годом. Они призваны дополнить уже имеющиеся данные архивных документов, манускриптов и эпиграфических надписей о мелике Егане. Правитель Дизака мелик Еган был крупнейшей политической фигурой армянской действительности 30-х годов XVIII века, который в феврале 1736 года в Муганской степи принял участие в коронации правителя Персии Надир-шаха, назначившего его общим управляющим армянских меликств Арцаха. Вероятнее всего, в том же году он получил от Надир-шаха саблю с позолоченным шахским клеймом. Обнаруженные сабли мелика Егана с клеймом и надписями, свидетельствующими о владельце, являются редкими сохранившимися образцами оружия, которые представляют символы и ценности, характеризующие светскую власть.

²³ Դիվան հայ վիմագրության, սյր. V, Արցախ, կազմեց Ս. Բարխուդարյան, Երևան, 1982, էջ 178:

INSCRIPTIONS ON MELIK YEGAN'S
NEWLY FOUND SWORDS

ARTAK MAGHALYAN

S u m m a r y

Not many objects or armor of state and military figures symbolizing the secular government of the Armenian statehood from various time periods have been kept, with the exception of construction records and evidence scattered in handwritten manuscripts. In addition to the archival documents, manuscripts and epigraphic sources related to Melik Yegan, the inscriptions made on his three newly found swords, as well as the mark on his sword canes which are all most likely dated to 1736 are presented. Melik Yegan of Dizak was one of the most prominent Armenian political figures of the 1730s, who, in the February of 1736 participated in the coronation of Nader Shah of Persia in the plains of Mughan. Nader appointed Melik Yegan a ruler of all Armenian melikdoms of Artsakh. Presumably, in the same year Melik Yegan received from the Shah a sword with the gilded mark and the sword cane. Melik Yegan's newly found swords are unique weapons which bear the marks and inscriptions of the owner, thus representing the sacrament of secular authority.